փորոտիքի մեծ մասը վարակել է կամ տարածուել է կրծքի վերայ կամ փորի մէջ։

Գործածութեան համար արգելած միսը և տուբերկուլոզական փորոտիները չը պէտք է կենդանիների համար իբրև կերակուր գործածել, այլ հարկաւոր է ոչնչացնել։

գ. Կաշին պէտք է առաջ անվնաս անել, ըստ կանոնի, և ապա գործածել։

դ. Թոքախտով հիւանդ կովերի կաթը ծախելը արգելուած է. սակայն այդ կաթը, նոյն իսկ տեղում եփ տալուց յետոյ, կարելի է գործածել կենդանիներին կերակրելու համար։

Բժշկ. դոքտոր Գր. Գասպ. Տէր-Գրիգորեանց (Ղզլարցի)։

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

1) ՊՌՕՇԵԱՆՑ ՊԵՐՃ։—ՑԵՑԵՐ, վէպ։ Արտատպած «Մուրճ» ամսագրից։ Թիֆլիս, տպար. Ռօտինեանցի, 1889 թ.։ Գինն է 1 ռուբլի։

2) ԿՈՑԼԱՒ ՀԱՑՐ. Վիեննայի Մխիթարեան Ուխտից։—ԲԱՌԳԻՐՔ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ։ Վիեննա, 1889 թ., տպ. Մխիթարեան Ուխտի։

3) ԱՇԸԳ ՋԻՒԱՆ։— ՔԵԱՐԱՄԻ և ԱՍԼԻԻ ՀԷՔԻԱԹԸ հանգերձ երգերով։ Փոխադրութիւն տաճկերէնից։ Հրատարակութիւն Գ. Սանդուկանցի։ Ալէքսանդրօպոլ, տպար. Սանդուկանցի, գրաչար Բուլեաճեանց, 1888 թ.։

4) ԽԱՐԱԶԵԱՆՑ ԳԷՈՐԳ, Օձնեցի։—ՆԺԴԵՀԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ։ Ոտանաւորներ և երգեր։ Գիրք Ա., Թիֆլիս, տպ. Վարդանեանցի։

5) ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ ԳԷՈՐԳ։—ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԴԻԿ։ Առակ չափահասների համար։ Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի. 1889 թ.։